Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի՝
2018 **թվականի հոկտեմբերի** 3-**ի նիստի** N 4 **արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ.- 2018-2019 **ուսումնական տարվա առաջին կիսամյակում անվանական կրթաթոշակներ տրամադրելու մասին հարցը**:

Զեկուցող՝ պրոռեկտոր Մ.Հարությունյան:

Զեկուցողը նշեց, որ մանդատային հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 2-ի, ժամը 13:00-ի (արձանագրություն N) նիստում լսվել է 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակում անվանական կրթաթոշակների հավակնող թեկնածուների հարցը: Համաձայն գիտական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի»՝ ֆակուլտետների դեկանները ներկայացրել են իրենց ֆակուլտետներում անվանական կրթաթոշակների հավակնող թեկնածուների անունները: Մանդատային հանձնաժողովը որոշել է ռեկտորատի հաստատմանը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա առաջին կիսամյակում համալսարանի 6 ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուներին: Մանդատային հանձնաժողովի որոշումը (նիստի արձանագրությունը) կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Կ.Աթոյանը, Մ.Մովսիսյանը, Գ.Նազարյանը, Թ.Մկրտչյանը, Վ.Միքայելյանը, Ս.Խաչիկյանը, Մ.Բաղալյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Համաձայն գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի»՝ հաստատել 2018-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակում համալսարանի 6 ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուների վերաբերյալ մանդատային հանձնաժողովի որոշումը և անվանական կրթաթոշակներ տրամադրել՝

1. **Գագիկ Զարմավիրի Բաղադյանին՝** կառավարման ֆակուլտետի «Հակաճգնաժամային կառավարում» մասնագիտության բակա-

լավրիատի առկա անվճար ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Զ.Բաշինջաղյանի անվան» կրթաթոշակ:

2. **Մերի Ռոբերտի Օհանյանին՝** ֆինանսական ֆակուլտետի «Մաքսային գործ» մասնագիտության բակալավրիատի առկա անվճար ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Հ.Թումանյանի անվան» կրթաթոշակ:

3. **Սոնա Սուրենի Մելիքսեթյանին՝** տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության բակալավրիատի առկա անվճար ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Մ.Քոթանյանի անվան» կրթաթոշակ:

4. **Մարինե Երվանդի Ալեքսանյանին՝** մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի «Շուկայաբանություն (Մարքեթինգ)» մասնագիտության բակալավրիատի առկա անվճար ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Վ.Ներկարարյանի անվան» կրթաթոշակ:

5. **Արշակ Քրիստի Իսոյանին՝** ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտության բակալավրիատի առկա անվճար ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Ա.Արզումանյանի անվան» կրթաթոշակ:

6. **Սոնա Կարենի Ոսկանյանին**՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Կ.Կարագյանի անվան» կրթաթոշակ:

7. **Էլմիրա Սարգսի Մուրադյանին՝** կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել համալսարանի ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող կրթաթոշակ:

Ռեկտոր՝ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2018 թ. Հոկտեմբերի 3
Երևան